Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՁՈՐԱԳԵՏԻՑ

Մեր հանդեսները լոկ հանդեսներ չեն: Նրանք ունեն մի հետաքրքրական, նոր հատկություն:

Նրանք հավաքույթի առիթներ են: Հավաքույթի ոչ թե մի գյուղի կամ քաղաքի, այլ շրջանի, երբեմն մի քանի կենտրոնների: Երբեմն ամբողջ հանրապետության: Իսկ երբեմն էլ ամբողջ Անդրկովկասի:

Այստեղ են շփվում մեր լայն մասսաները, կապվում իրար հետ մի նոր կենցաղական կապով. բանվոր, գյուղացի, ծառայող, կարմիրբանակային, մասնագետ, մտավորական, կոմերիտական, պիոներ… այս ամենն ամբողջ հայաստանյան մասշտաբով հետզհետե մոտենում են իրար, ճանաչում, մտերմանում և «անցյալ» ստեղծում:

Մեր երկաթուղին խոշոր հեղաշրջում է մտցնում իր գծի վրա ընկած կետերում: Ձգվելով Հայաստանի տարածության ամբողջ երկայնքով և մի օրվա մեջ ահագին խմբեր ու բազմություններ զցելով մի ծայրից մյուսը՝ նա ստեղծում է «մի փողոցի կյանք» մի մեծ քաղաք, որ Հայաստանն է:

Երևան, Լենինական, Ղարաքիլիսա, Ալլահվերդի— գլխավոր կենտրոններ «երկաթուղային կյանքի»— ստեղծում են այն տպավորությունը, թե այս բազմությունն ապրում է մի տեղ, մի քաղաքում:

Եվ ահա մի որևէ հանդիսի առիթով գնացքը գալիս մտնում է բոլոր կայարանները, հավաքում է այդ բազմությունները և տանում, միացնում, խառնում իրար:

Ահա քեզ և կոլեկտիվ կյանք, ահա նոր կենցաղ:

Ինձ միայն հանդեսը չէ որ հետաքրքրում է: Հետաքրքիր են մարդիկ, դեպքերը, երևույթները, հետաքրքիր է մեր նոր կենցաղը, որ ավելի ցայտուն է այսպիսի առիթներում:

Դեպի Ձորագետ:

Դվալի բարձունքների վրա ենք:

Կես գիշեր է. այնպես խավար, կարծես լույսը դեռ չի ստեղծված և դեռ քաոսի մեջ ենք: Քամին թևերը լայն բացած թափ է տալիս, փռփռացնում, հարվածում է մեր դեմքին: Զինվորական ավտոն գիշատիչ բազեի պես շեշտակի նետվում է այդ քամու դեմ և կատաղի խրվում նրա կուրծքը՝ ճամփա բաց անելով: Նրա լույսերը ցայտելով երկու կատաղի աչքերից շոշափում են Դվալի կողերը:

«Հյուրընկալս» ընկ. Ա. Ս.-ն է, որի սիրալիրությամբ է ահա, որ սլանում եմ այս լեռնային ուղիով և մի քիչ էլ դողում լեռնային ցրտից: Թեև նա ինքն էլ և իր օգնական ընկ. Հ.-ն այնքան էլ չեն շոգում բարակ զգեստների մեջ, որքան որ զինվորական առածը հաստատի թե «զինվորը չի մրսում»: (Հյուրընկալս և իր օգնականը զինվորականներ են): Ուղեկիցներիցս մինն էլ ընկ. Պ. Ստ. է— «կոոպերացիան»: Նա էլ «պակաս չի շոգում»:

— Զարմանալի երկիր է մեր Հայաստանը,— ասում է ընկ. Ա. Ս.-ն,— մի երկու ժամվա մեջ մի քանի կլիմա ես փոխում: Նոր չէ՞ր որ նեղվում էինք շոգից:

Ընկ. Ս.-ն շրջել է ամբողջ Հայաստանում, որ ավելի լավ է ճանաչում քան իր ծննդավայրը՝ Վրաստանը: Նա ամեն բանով հետաքրքրվում է: Նա նոր տիպի զինվորական է, որի համար մեր երկրի քաղաքական և տնտեսական խնդիրները լոկ «խաղաղ բնակչության» վերաբերող զբաղմունք չեն՝ զինվորական կյանքից դանակով կտրած և բաժանած: Նա հենց ինքը կատարել է տնտեսական հանձնարարություններ: Բայց և սիրում է զինվորական գործը: Ընկ. Ա. Ս. -ն «անցյալ» ունի, վտանգների հետ շատ է խաղացել:

Իհարկե, ես այս րոպեիս շատ եմ ուրախ, որ նրա միտքը չի ընկնում վերցնել շոֆերի ղեկը և ավտոն լիակատար թափով թռցնել… Ի մեծ տհաճություն իմ՝ այդ սպորտը նա սիրում է:

Ստեփանավան: Ժամը 2-ը գիշերվա: «Խուժել ենք» մի հյուրասեր ընտանիք, վեր կացրել քնից: Թեյ են պատրաստում: Հյուրընկալ տիկինը կատակում է ընկ. Ա. Ս.-ի հետ:

— Տեսեք ինչպե՞ս հայերեն է խոսում:

— Հայաստանում ի՞նչ չեմ սովորել:

***

«Ի՞նչ գեղեցիկ տեսարան»— բացականչում եմ ես առանց մտածելու՝ նայելով Ստեփանավանի դաշտին, և հետո մտածում եմ, որ այս շաբլոն խոսքի ակամա, հանկարծ արտասանությունն է միակ նշանը, որ մի բան գեղեցիկ է իրոք:

Սլանում ենք խճուղով դեպի ձորը: Ճամփին զարդարված գեղջկուհիներ ու գյուղացի երիտասարդներ սայլերով գնում են: Եզների եղջյուրներին ծաղիկներ ու ժապավեններ են փաթաթել: Երգում են:

— Ո՞վ կկարծեր մի ժամանակ, թե մեր ժողովուրդն այսպես շուտով երգել կսկսի:

Եվ ընկ. Ս.-ն պատմում է, որ մի քանի տարի առաջ այս ճամփաներին, երբ տեսավ գյուղացիների «քոչարին»՝ ահագին տպավորություն ստացավ:

— Փա՛ռք աստծու, վերջապես մեր ժողովուրդն սկսեց պարելը:

Եվ «զինվորականությունն» սկսեց պատմել 10 ֆունտ յուղի, մի քանի տոպրակ հացի «երջանիկ» օրերի պատմությունը:

Ինձ զարմացնում էր, թե ի՜նչ աստիճանի մեծ է մեր զինվորականության մասնակցությունը մեր երկրի ներքին, տնտեսական և կուլտուրական կյանքի մեջ:

Հանկարծ վեճ է ծագում: «Զինվորականությունը» և «կոոպերացիան» վիճում են.— «քաղաքը գյուղի հաշվին է աճում, թե ներդաշնակ կապ կա երկուսի աճման մեջ»:

Իջնում ենք ձորը: Վեճը դադարել է: Մեր առջև բացվում են ձորերի երախները, և ավտոն սկսում է զգույշ իջնել: Ժայռեղեն բուրգերը, աշտարակները կախված են անդունդների վրա:

Քարափների պատերից կախ են ընկած տափակիրվանդաններ՝ օդային աթոռիկների նման: Սարալանջերին փռված են թփուտներն ու ծառերը: Եվ ի՜նչ ծաղիկներ, թարմ, բուրավետ: Դեռ գարուն է այստեղ: Լեռնային օդը թանկագին խմիչքի պես ըմպվում է և եռում երակների մեջ:

— Ինչո՞ւ բնությունը գեղեցկությունը և մահը միասին է ստեղծել, ախր ինչպե՞ս կարելի է մեռնել, ինչո՞ւ մեռնել, երբ այսքան գեղեցիկ է կյանքը…

***

Մի գոգավոր ձոր, որ իր մեջ ընդունելով մի քանի գետեր, գոյացնում է մի հրապարակ, հետո նեղանում է, սեղմված ժայռերի աշտարակների մեջ գնում թափվում Դեբեդը—դա Ձորագետն է:

Կոնաձև ժայռերի աշտարակներ են ցցված ձեր դիմացը, որոնց ոտներին գալարվում է Ձորագետը և սեղմվում նրանց մեջ: Դա ամբարտակի տեղն է: Մենք այն բլուրի վրա ենք, որ եթե այդ ամբարտակը շինվի և ջուրը բարձրանա՝ պիտի ընկղմի ջրի տակ, գոյացնելով մի լիճ, որ ծածկելով մեր հետևի հրապարակը՝ պիտի կուլ տա տներ և այգիներ: Մուխրանի լեռներից եկող երեք գետեր՝ Գերգեր, Կորթուն և Ձորագետը պիտի լցվեն այդ ավազանը: Ամբարտակը կունենա 40 մետր բարձրություն: Ձրի խորությունը 20 մետր: Լիճը պարունակելու է 22 միլիոն խորանարդ մետր ջուր: Բլուրի ուսով անցնելու է թունելը, որով ջուրը պիտի հոսի: Նրա ընկեցը պիտի լինի 140 մետր և պիտի տա 30 հազար ձիու ուժ:

Ժայռերը, որոնց պիտի հենվի ամբարտակը, ամրապինդ բազալտ են, ծակոտենի կողմից ապահով են և ջուրը չի թափանցի: Ձորում կա բազալտի և ավազի ահագին պաշար:

Դիմացի բլրին բանվորների համար բարաքներ կշինվեն: Վարչությունը՝ Ղարաքիլիսա:

Հիդրոկայանը կավարտվի 3 տարում և պիտի նստի 11 միլիոն ռուբլի:

***

Բլուրները, ժայռերի գագաթները զարդարված են դրոշակներով:Հենց այդ կետերում էլ դինամիտ է դրած: Նրանք այսօր պիտի պայթեն և ազդարարեն «բացումը»:

Բազմությունը խումբ-խումբ լցվել է բլրի լանջին: Վրաններ, տախտակի բուֆետներ, ճաշարաններ: Ձուռնաները ծվում են, շվիները՝ դայլայլում: Օդը լցված է բացականչություններով, գետի խշշոցով: Ճաղիկների և խոտերի բուրմունքը, մանավանդ ծոթրինի սուր հոտը շշմեցնում են հաճելի արբեցման չափ:

Գյուղացիների խուրջինները մատնում են առատ ուտելեղեններ: Ահա գայթակղիչ գաթան դուրս է նայում արանքից: Իրար են անցել բանվորներ, կարմիրբանակայիններ, գյուղացիներ, գեղջկուհիներ, երիտասարդներ: Իսկ ժայռերի բարձունքից նեղ շավիղներով բեռնած ձիերի սանձը քաշելով իջնում են գյուղացի խմբեր՝ դրոշակները փռփռացնելով: Նրանց շարանները լեռնային վտակների պես հոսելով ներքև գալիս լցվում են ձորը, ձորաբլուրը: Հետզհետե մթնոլորտը թանձրանում է, լարվում: Ժամը 12-ն է: Մոտ է բացումը:

***

Բլրի ստորոտում վաշտը շարվեց: Բազմությունը հավաքվում է այնտեղ: Ձորքը գրավիչ է միշտ… բայց նրանք հավաքվել են ընդունելու կառավարությանը և հյուրերին, որ ահա գալիս են ժայռի տակից: Գալիս են ընկերներ Սաքո Համբարձումյան, Ա. Կարինյան[1], Օրախելաշվիլի[2], Կասյան[3], Ա. Հովհաննիսյան[4] և ուրիշներ, որոնց շրջապատում է բազմությունը: Օրկեստրը ողջույնի նվագ է թնդացնում և եկողները բարձրանում են բլուրը:

***

Ընկ. Սաքո Համբարձումյանը բաց է անում հանդեսը: Եվ հանկարծ նրա առաջին իսկ խոսքերը «խանգարվում» են խլացուցիչ որոտներով:

Դա դիմացի բլուրի կատարն է, որ թնդում է պայթյունից: «Սկսվե՛ց», քանդում են ժայռերը: Այնուհետև սկսվում է ճառախոսությունը:

Ունկնդիր բանվորները, գյուղացիները, կարմիրբանակայիններըև հոծ մասսան օղակում են բարձր տրիբունը: Դրանք եկած են Երևանից, Լենինականից, Ղարաքիլիսայից, Ալլահվերդուց և այլ ուրիշ վայրերից:

***

Խոսում են հռետորները պայթյունների որոտի մեջ: Սովորական հասարակ դարձվածքները խանգարվելով պայթյուններից՝ տեղի են տալիս նորանոր պատկերների: Պայթում են դինամիտային եռանդով և խոսքն սկսում է գեղեցկանալ: Խոսքն ուժ է առնում նաև գործի փաստով, որ սկիզբ է առնում այսօր:

Վաղը չէ մյուսը օրը կսկսվի համառ աշխատանքը:

***

Բայց ո՞ւր է հիդրոկայանը… Չորս կողմը միայն վայրի ժայռեր են, մերկ բլուրներ, կուսական գետը և ծաղիկներ: Մնացածը պլակատներ են, ճառեր և երաժշտություն:

Ոչինչ կկառուցվի այդ հիդրոկայանը:

Ինչպես կառուցվեցին Շիր—ջրանցքը, Երևանի Հիդրոշենը, Լենինականի տեքստիլ գործարանը[5], բամբակազտիչը[6], և վերջապես՝ Զագէսը[7]:

***

Պարեր, ճաշկերույթ, երաժշտություն:

Չես ուզում հեռանալ այս վայրից:

Ահա այս ամբողջ ավազանը կլճանա մի օր և մակույկները կճոճվեն նրա վրա: Այստեղ ուր կանգնած ենք ահա, մի օր կլինի ջրի տակ, կգան տիղմն ու ավազը և կթաղեն նրանց… ու մեր օրերն էլ հետը: Կգան օրեր, երբ մենք բոլորս կդառնանք «պատմություն հեղափոխության առաջին տասնամյակի», և ջրերը կօրորվեն մեր պարերի, մեր հացկերույթի և ճառերի վայրի վրա:

***

Որքա՜ն մարդ տեսանք այսօր… Բոլոր դեմքերը գալիս նորից անցնում են հիշողության միջով… Մի հաճելի հոգնություն էգալիս վրադ: Մարդիկ, ժայռեր, ծաղիկներ, գետ, արև և ծոթրինի հոտը հարբեցնում է:

Պետք է վերադառնալ: Բայց ինչո՞վ: Ո՛չ ավտոմոբիլ մնաց, ո՛չ կառք: Բնական կառքով ճամփա ենք ընկնում: Ճամփին, ծաղկած բլուրների գլխին նվագախմբեր են նստած և ձայն են տալիս իրար:

Անցնում ենք այդ նվագող բլուրների մոտով, իջնում ենք ձորը:

Կայարանում ահագին բազմությունն սպասում է գնացքին: Վերջապես գալիս է նա և այս բազմությունը բեռնելով իր վրա՝ տանում ցրում է Հայաստանի երկայնքով:

Ղարաքիլիսա: Նվագող զինվորական երաժշտությամբ, կարմիրբանակայինների, բանվորների, պիոներների շարքերի հետ մտնում ենք քաղաք:

Երեկոն հանգիստ փակում է իր աչքերը:

ՁՈՐԱԳԵՏԻՑ

(Էջ 58)

Ակնարկը գրված է Ձորագետի հիդրոէլեկտրակայանի հիմնադրման առիթով, որը տեղի է ունեցել 1927 թ. հուլիսի 24-ին (հանդիսավոր բացումը՝ 1932 թ. նոյեմբերի 7-ին):

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1927, № 171: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Կարինյան (Գաբրիելյան) Արտաշես (ծնվ. 1886)— կուսակցական և պետական գործիչ, հրապարակախոս, գրականագետ-քննադատ: ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ: 20-ական թվականներին եղել է ՀՍՍՀ արդարադատության ժողկոմ:

2 Օրախելաշվիլի Մամիա (1883—1937)— կուսակցական-պետական գործիչ, Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահ:

3 Կասյան (Տեր-Կասպարյանց) Սարգիս Իվանի (1876—1938)— ՀՍՍՀ հեղկոմի առաջին նախագահը, այնուհետև Անդրֆեդերացիայի և ՀՍՍՀ կենտգործկոմների նախագահ:

4 Հովհաննիսյան Աշոտ Գարեգինի (1887—1972)— կուսակցական և պետական գործիչ, ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ: 1920—1921 թթ. եղել է ՀՍՍՀ լուսժողկոմ, 1922—1927 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:

5 Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ գործարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1927 թ. նոյեմբերի 29-ին:

6 Երևանի բամբակազտիչ գործարանը գործարկվել է 1924 թ. մարտի 15-ին:

7 Զագէս— Վ. Ի. Լենինի անվան Զեմո-Ավճալյան հիդրոէլեկտրակայանը կառուցվել է 1923—1927 թթ.: